

Ուքրայնայի անջատումէն: Վտանգներ՝ որոնց իրականանալու միջոցին ոչ մի Հայաստան, ոչ մի Վրաստան պիտի չդիմանան, եթէ անգամ լինին անկախ եւ գերանկախ:

Վերջ ի վերջոյ, թուրանական վտանգը մեզի համար ամենէն աւելի զարհուրելին է, եւ լաւ է, որ հայ մտաւորականութիւնը մերթմընդ մերթ կը դարձնէ զայն իր մտահոգութեան ու քննութեան առարկայ: Լաւ է, որ մեր ընկերներէն մէկը, Ջարեւանդ, ամբողջ գիրք մըն է հրատարակեր անոր շուրջ, թէեւ իր հայկական, սարսափահար երեւակայութիւնը խիստ չափազանցեր է անոր ծաւալումի եւ պետականօրէն կազմակերպումի հնարաւորութիւնները:

Այո՛, սեւ կէտեր չատ կան մեր ապագայի հեռանկարին վրայ, — կէտեր, որոնց շուրջը կենդրոնացնելու ենք մեր բովանդակ ուշադրութիւնը, առանց վատնելու մեր ուժերն ու

ժամանակը ներքին ամուլ ու սպանիչ կռիւներուն վրայ:

Վհատուելու չենք: Եթէ մէկ կողմէն վրտանդներու չարաշուք թուխպը չփարատուի հայկական հորիզոններէն եւ յամառօրէն կառչած կը մնայ մեր ճակատագրին, ապա միւս կողմէն, բարեբախտաբար, նոր յոյսեր կը ծլին մեր չարչրկուած հոգիներու մէջ, նոր ազդակներ երեւան կուգան քաղաքակիրթ մարդկութեան մէջ: Կ'աճի, կը զօրանայ հետզհետէ Ազգերու Դաշնակցութիւնը, կ'աճի եւ տիրական դիրքեր կը գրաւէ Միջազգային Աշխատանքային Բանակը, հետզհետէ իր ձեռքն առնելով աշխարհի գործերուն ղեկը:

Կ'աճի, յուսով ենք, նաեւ Բնաշխարհի հայութեան ուժն ու գիտակցութիւնը, հակառակ օտար, ախտաւոր կարգերուն եւ դրակօնական ճնշումներուն...:

